ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Արշալույս, 0231-6-09-34

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 սեպտեմբերի 2016 թվականի N 38

ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի հինգերորդ մասով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնքի ավագանու 2016 թվականի սեպտեմբերի 26-ի թիվ 8 հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԵՓՐԵՄՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
2. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԱՄ
3. ԿՆՅԱԶՅԱՆ ԱՐԱՅԻԿ
4. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԹՈՒՐ
5. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՌՈՒԲԵՆ
6. ՇԱՀԲԱԶՅԱՆ ԱՇՈՏ
7. ՍԵՐՈԲՅԱՆ ԱՍԱՏՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Զ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2016 թվականի սեպտեմբերի 26
գ. Արշալույս

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2016 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-Ի
ԹԻՎ 38 ՈՐՈՇՄԱՆ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Ավագանու նիստի օրակարգը հաստատելու մասին:

Զեկ. Ա. Առաքելյան

2. Դրամական օգնություն հատկացնելու մասին:

Զեկ. Զ. Գրիգորյան

3.Հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու վերաբերյալ:

Զեկ Զ. Գրիգորյան

4. Հողի հարկի գծով արտոնություն սահմանելու մասին:

Զեկ. Զ. Գրիգորյան

5.Համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրի նշանակության այլ հողերը աճուրդային կարգով օտարելու մասին;

Զեկ. Զ. Գրիգորյան

6.Համայնքի 2016-2019թթ զարգացման քառամյա ծրագիրը հաստատելու մասին:

Զեկ. Զ. Գրիգորյան

7. Համայնքի ավագանու 2016 թվականի փետրվարի 9-ի թիվ 17 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

Զեկ. Զ. Գրիգորյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Արշալույս, 0231-6-09-34

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 սեպտեմբերի 2016 թվականի N 39

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին հատկացնել դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԵՓՐԵՄՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
2. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԱՄ
3. ԿՆՅԱԶՅԱՆ ԱՐԱՅԻԿ
4. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԹՈՒՐ
5. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՌՈՒԲԵՆ
6. ՇԱՀԲԱԶՅԱՆ ԱՇՈՏ
7. ՍԵՐՈԲՅԱՆ ԱՍԱՏՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Զ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2016 թվականի սեպտեմբերի 26
գ. Արշալույս

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2016 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26 -Ի N39 ՈՐՈՇՄԱՆ

ՑՈՒՑԱԿ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ

1. Բարսեղյան Սահակ Մաոլենի – 100000 /հարյուր հազար/ << դրամ
2. Ղազարյան Գրիգոր Վաղարշակի - 110000 /հարյուր տաս հազար/ << դրամ
3. Սարգսյան Արսեն Թորգոմի – 20000 /քսան հազար/ << դրամ
4. Սայադյան Արմեն Գևորգի - 130000 / հարյուր երեսուն հազար/ << դրամ
5. Ասատրյան Արտավազդ Սերյոժայի - 30000 /երեսուն հազար/ << դրամ
6. Դավթյան Հասմիկ Վարդանի – 100000 /հարյուր հազար/ << դրամ
7. Մկրտչյան Սերժիկ Համլետի – 120000 /հարյուր քսան հազար / << դրամ
8. Խաչատրյան Հարություն Բաբկենի – 40000 /քառասուն հազար/ << դրամ
9. Մանուկյան Կարինե Հովհաննեսի - 100000 /հարյուր հազար/ << դրամ
10. Արշակյան Հերմինե Սուրիկի – 100000 /հարյուր հազար/ << դրամ
11. Մանուկյան Հովհաննես Ռուբիկի – 100000 /հարյուր հազար/ << դրամ
12. Գևորգյան Ջեմմա Մեսրոպի – 50000 /հիսուն հազար/ << դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Արշալույս, 0231-6-09-34

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 սեպտեմբերի 2016 թվականի N 40

ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով Հայաստանի հանրապետության հողային օրենսգրքի 100-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետով և 101-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 280-րդ հոդվածով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ճանաչել համայնքային սեփականություն Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնքի բնակիչներ Գրիգոր Սահակի Փանոսյանի. Հայկանուշ Մովսեսի Մովսիսյանի,Սահակ Գրիգորի Փանոսյանի, Աննա Գրիգորի Փանոսյանի կողմից կամովին հրաժարված 04-021-0306-0036 կադաստրային ծածկագրով 1.3857հա վարելահողը:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԵՓՐԵՄՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
2. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԱՄ
3. ԿՆՅԱԶՅԱՆ ԱՐԱՅԻԿ
4. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԹՈՒՐ
5. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՌՈՒԲԵՆ
6. ՇԱՀԲԱԶՅԱՆ ԱՇՈՏ
7. ՍԵՐՈԲՅԱՆ ԱՍԱՏՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Զ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2016 թվականի սեպտեմբերի 26
գ. Արշալույս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Արշալույս,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 սեպտեմբերի 2016 թվականի N 41

ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Հողի հարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Սահմանել հողի հարկի գծով արտոնություն Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնքի բնակիչների նկատմամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԵՓՐԵՄՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
2. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԱՄ
3. ԿՆՅԱԶՅԱՆ ԱՐԱՅԻԿ
4. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԹՈՒՐ
5. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՌՈՒԲԵՆ
6. ՇԱՀԲԱԶՅԱՆ ԱՇՈՏ
7. ՍԵՐՈԲՅԱՆ ԱՍԱՏՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Զ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2016 թվականի սեպտեմբերի 26
գ. Արշալույս

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2016 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 41 ՈՐՈՇՄԱՆ

Ց Ո Ւ Ց Ա Կ
ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

N	Ազգանուն անուն	կադաստրային ծածկագիր	հա	հարկի չափը
1	Մանուկյան Մեխակ Կիրովի	04-021-349-004	0.51	48086
2	Ներսիսյան Ազատ Գերասիմի	04-021-223-006	0.12	3637
	Ներսիսյան Ազատ Գերասիմի	04-021-224-006	0.12	4639
	Ներսիսյան Ազատ Գերասիմի	04-021-320-001	0.51	1456
3	Մանուկյան Խաչիկ Եգորի	04-021-295-005	0.86	60000
4	Առաքելյան Հայկ Վարդանի	04-021-261-060	0.25	24768
		04-021-261-070	0.29	21425
5	Ալեքսանյան Սոնիկ Միհրի	04-021-099-010	0.1	11587
6	Գրիգորյան Հրաչք Մերուժանի	04-021-0319-0001	0.35	44820
		04-021-0096-0009	0.1	14867
		04-021-0059-0010	0.168	24980
		04-021-0312-0021	0.8341	2597
7	Սերոբյան Սուրյա Շիրադի	04-021-314-001	0.5	36233
		04-021-313-001	0.35	24639
		04-021-015-005	0.101	5078
		04-021-046-014	0.203	10207
		04-021-095-013	0.1	5029
7	Խաչատրյան Վոլոդյա Խաչիկի	04-021-257-028	0.8	57494
ԸՆԴԱՄԵՆԸ			6.2661	401542

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Արշալույս, 0231-6-09-34

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 սեպտեմբերի 2016 թվականի N 42-Ն

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀՈՂԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ և 68-րդ հոդվածներով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 20-րդ կետով և Հրապարակային սակարկությունների մասին օրենքով, հիմք ընդունելով Հայաաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին>>N 1850-Ն որոշումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնքի սեփականություն հանդիսացող 19 փողոցի 4/4 հասցեում գտնվող 04-021-0094-0039 կադաստրային ծածկագրով 789.0 ք/մ բնակավայրի նշանակության այլ հողը օտարել աճուրդային կարգով:
2. Օտարման մեկնարկային գինը սահմանել 1 ք/մ կադաստրային արժեքը 1242դրամ, ընդամենը՝ 979938/ինը հարյուր յոթանասունինը հազար ինը հարյուր երեսունութ/ՀՀ դրամ:
3. Հողատարածքի յուրաքանչյուր լոտի համար յուրաքանչյուր քայլը սահմանել մեկնարկային գնի 5 %-ի չափով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ -7 Դեմ -0 Չեռնպահ -0

1. ԵՓՐԵՄՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
2. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԱՄ
3. ԿՆՅԱԶՅԱՆ ԱՐԱՅԻԿ

4. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԹՈՒՐ

5. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՈՒԲԵՆ

6. ՇԱՀԲԱՋՅԱՆ ԱՇՈՏ

7. ՍԵՐՈԲՅԱՆ ԱՍԱՏՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ջ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2016 թվականի սեպտեմբերի 26
գ. Արշալույս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Արշալույս, 0231-6-09-34

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 սեպտեմբերի 2016 թվականի N 43-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ 2016-2019 ԹԹ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնքի 2016-2019թթ զարգացման քառամյա ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԵՓՐԵՄՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
2. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԱՄ
3. ԿՆՅԱԶՅԱՆ ԱՐԱՅԻԿ
4. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԹՈՒՐ
5. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՌՈՒԲԵՆ
6. ՇԱՀԲԱԶՅԱՆ ԱՇՈՏ
7. ՍԵՐՈԲՅԱՆ ԱՍԱՏՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Զ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2016 թվականի սեպտեմբերի 26
գ. Արշալույս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՄԱՅՆՔԻ

2016-2019թթ.

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Կազմեց՝ համայնքի ղեկավար Զ. Գրիգորյան

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 2016 թվականի սեպտեմբերի 26-ի թիվ 8 նիստում

ԱՐՇԱԼՈՒՅՍ—2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԻՆՉ է համայնքի զարգացման քառամյա ծրագիրը

1. Համայնքի իրավիճակի բնութագրում և վերլուծում, կարիքների գնահատում և հիմնախնդիրների բացահայտում:
2. Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները:
3. Ըստ առանձին բնագավառների առաջնահերթ ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում:
4. Համայնքի բյուջեի ֆինանսական միջոցների գնահատում և կանխատեսում:
5. Համայնքի զարգացման քառամյա ծրագրի հիմնական ցուցանիշները:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

. Համայնքի զարգացման քառամյա ծրագրի մշակման մեթոդաբանական առանձնահատկությունները (այսուհետ՝ ՀԶՔԾ)

Համայնքի քառամյա զարգացման ծրագիրը համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը նախատեսվում է ռազմավարական կտրվածքով համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացումը: Համայնքի քառամյա զարգացման ծրագիրը պետք է համահունչ լինի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի և կառավարության հավանությանն արժանացած մարզային, տարածաշրջանային զարգացման և այլ ռազմավարական ծրագրերին:

. ՀԶՔԾ-ի մշակման ծրագրային հիմքերը

ՀԶՔԾ-ի հիմքը համայնքի պայմանների և սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծությունն է և գնահատումն է: Խնդիրն այստեղ տեղի նյութական, աշխատանքային ու ֆինանսական ռեսուրսների և դրանց համակցման պոտենցիալ հնարավորությունների, առկա հիմնախնդիրների վերահանման, սոցիալական և տնտեսական երևույթների կանխատեսման, համայնքի ուժեղ և թույլ կողմերի բացահայտման ճանապարհով համայնքի մասին ամբողջական պատկերացում կազմելն է ու այստեղից էլ՝ համայնքի ընթացիկ և միջնաժամկետ զարգացման նպատակային ուղությունների սահմանումը:

ՀԶՔԾ-ն ՝պարտադիր ներառում է համայնքի զարգացման վրա ազդող արտաքին միջավայրը՝ տեղական խնդիրների հետ միասնության մեջ:

ՀԶՔԾ-ի կարևոր բաղադրամասերից են նաև քառամյա ժամանակահատվածում համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը: Ծրագիրն իր մեջ պարունակում է բյուջեյի տարրեր՝ չորս տարվա կտրվածքով, իսկ յուրաքանչյուր տարի բյուջեն կազմվում է ավելի հիմնավորված ձևով:

. ՀԶՔԾ-ի հակիրճ բովանդակությունը՝ ըստ կառուցվածքային բաժինների

. ՀԶՔԾ-ն հետապնդում է հետևյալ հիմնական նպատակները.

. ապահովել ՏԻՄ-երի լիազորությունների պատշաճ իրականացումը

. ապահովել համայնքի ամբողջական և համալիր զարգացումը

. բարելավել համայնքային ծառայությունների հասանելիությունը, մատչելիությունը և դրանց մատուցման որակը

. ապահովել ՏԻՄ-երի իրավասությունների բոլոր ուղղություններով ծրագրային լուծումների իրականացումը

. ընդլայնել համայնքային ծառայությունների մատուցման շրջանակը

. հասնել համայնքում առկա կարիքների /հիմնախնդիրների բավարարմանը/ լուծմանը

. կանխել համայնքում նոր հիմնախնդիրների առաջացումը

. ապահովել համայնքում պատշաճ կառավարման սկզբունքների իրականացումը:

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ, ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ ,ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

1828 թվականին հիմնադրված Քյորփալու անվամբ գյուղում առկա են եղել մի քանի տնտեսություն, որոնց թիվը հետագայում աճել է 1915 թվականին թուրքական յաթաղանից պրծած Արևմտյան Հայաստանից ներգաղթած հայրենակիցների շնորհիվ, որոնք հիմնել են շինություններ, մասնակցություն են ունեցել գյուղի հետագա զարգացմանը: 1935 թվականին գյուղն վերանվանվել է Արշալույս անվամբ: 1946 թվականից տարբեր երկրներից գյուղ են եկել թվով մեծ մեր հայրենակիցները, որոնց շնորհիվ գյուղը մեծացել, հզորացել և դարձել է բնակության համար հարմարավետ ապրելատեղ:

Սարդարապատի ճակատամարտի օրերին Իգդիրի հետևակային դիվիզիան ու հատուկ հեծելազորային խումբը, ինչպես նաև հայ հոգևորականներն ու աշխարհազորայինները, Քյորփալու գյուղի տարածքից ճակատագրական հարված են հասցրել թուրքերի մեծաքանակ զորքի դեմ: Հերոսամարտին ակտիվ մասնակցություն են ցուցաբերել նաև գյուղի բնակիչները:

1937 թվականին Հայաստանում տեղի է ունեցել կոլեկտիվացում, ինչպես բոլոր գյուղերը մենք էլ նրանց հետ անցել ենք կոլեկտիվացման շրջանը:

Արշալույսցիները ակտիվ կերպով իրենց նվիրել են կոլեկտիվացման գործին: Գյուղում հիմնվել է կոլտնտեսություն, մեր համագյուղացիները իրենց սեփական հողը, գյուղատնտեսական գործիքները, անասունները նվիրել են կոլտնտեսությունը:

1961 թվականին շահագործման է հանձնվել գյուղի մշակույթի տունը, որի կառուցման աշխատանքների տևողությունը եղել է մոտ 14 տարի: Դրանից հետո գյուղն ապրել է բուռն զարգացում, կառուցվել են զանազան շինություններ, անասնագոմեր, մեքենատրակտորային պարկեր, պահեստներ և այլ շենքեր, շինություններ:

Գյուղում զարգացել է նաև գյուղատնտեսությունը, անասնապահությունը, խոզաբուծությունը, թռչնաբուծությունը: Սկզբնական շրջանում գյուղը զբաղվել է բամբակագործությամբ և այգեգործությամբ, որից հետո սկսել են մշակել բանջարա-բոստանային կուլտուրաներ, որը նպաստել է գյուղի կոլտնտեսության հարստացմանը: Այդ տարիների ընթացքում գյուղում անցկացվել է լուսավորության և գազաֆիկացման աշխատանքներ:

1988 թվականի կառուցվել է Հայրենական Մեծ պատերազմում 105 զոհված մեր հայրենակիցների հիշատակին նվիրված հուշարձան կոթողը:

Գյուղի երիտասարդությունը ակտիվ մասնակցություն է ունեցել Արցախյան պատերազմին, շատերը իրենց կյանքը նվիրաբերել են Արցախի ազատագրմանը: 1995 թվականին կառուցվել է հուշարձան Արցախյան ազատամարտի հերոսներին նվիրված, որի միջոցով երախտապարտ Արշալույսցիները իրենց

հարգանքի տուրքն են մատուցում համայնքի սրբազան հողում ամփոփված, հերոսի մահով ընկած թվով 7 համագյուղացիների շիրիմներին:

Գյուղի մասին հիշատակումներ կան Կոմիտասի կենսագրության էջերից: Ճեմարանում ուսանելու տարիներին Սողոմոնը հյուրընկալում է իր դասընկերոջ տանը Քյորփալու գյուղում և առաջին անգամ շինականի տանը լսում է ժողովրդական երգ և ձայնագրում այն:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի ներկայիս տարածքի վրա անհիշելի ժամանակներից գտնվել է բնակավայր, որը ստեղծված չէ հնագետների կողմից և այժմ նախկին բնակավայրի հետքերը ավերված են, ներկայումս պահպանվել են 4 դամբարանադաշտեր, որոնք նույնպես հնագիտական լուրջ ուսումնասիրություն են պահանջում:

Մարզկենտրոնից գտնվում է 17կմ հեռավորության վրա, իսկ մայրաքաղաքից՝ 25 կմ: Այստեղով է անցնում Երևան-Արմավիր մայրուղին:

Գյուղը գտնվում է Արարատյան դաշտում ծովի մակերևույթից 920 մ բարձրության վրա:

Կլիմայական պայմանները կիսաանապատային, չոր ցամաքային են:Ամռանը միջին ջերմաստիճանը + 25 ^{0} C , ձմռանը՝ -5 ^{0} C:Տեղումների միջին քանակը 300մմ: Վերջին տարիների բնական աղետները (ցրտահարություն, կարկտահարություն) վատ են անդրադարձել համայնքի գյուղատնտեսությամբ զբաղվող բնակչության սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա: Այդպիսի աղետները կանխելու համար համայնքում տեղադրվել է երկու հակակարկտակայան:

Համայնքի բնակիչների հոգևոր կյանքում մեծ դեր է կատարում եկեղեցի՝ <<Սուրբ Մարիամ Աստվածածին>> եկեղեցին, որը կառուցվել է 19-րդ դարի 70-ական թվականներին և վերանորոգվել է 2009 թվականին <<Արշալույս>> բարեգործական հիմնադրամի շնորհիվ:

Համայնքում գտնվում է նաև սուրբ Կարապետ սրբավայրը, որտեղ ամեն տարի Սուրբ Հարություն տաղավար տոնին հաջորդող կիրակի օրը, կատարվում է ուխտագնացություն:

ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Համանքում ապրում են 4322 բնակիչներ, այդ թվում՝

1. կանայք	2043
2. տղամարդիկ	2279
3. 0-6 տարեկան բնակիչների թիվը	308
4. 7-17 տարեկան բնակիչների թիվը	619
5. 18-63 տարեկան բնակիչների թիվը	2784
6. 63-ից բարձր տարեկան բնակիչների թիվը	502
7. կենսաթոշակառուներ	405
8. փախստականներ	5
9. միակողմանի ծնողազուրկ երեխաներ	22
10. հաշմանդամներ	23

11. ընտանեկան նպաստների համակարգում գրանցված ընտանիքներ 88
12. հայրենական պատերազմի մասնակիցներ 1
13. արցախյան պատրազմի մասնակիցներ 80
14. անօթևաններ 19
15. աշխատունակ բնակիչներ 2725
16. զբաղվածներ 2169
17. գործազուրկներ 556
18. տնային տնտեսությունների (ծխերի) թիվը 1021
19. հայրենական և արցախյան պատերազմներում զոհվածների ընտանիքներ 112

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Համայնքի ավագանու անդամների թիվը 9 է:

Համայնքը կառավարվում է համայնքի ղեկավարի կողմից, որն ընտրվում է չորս տարին մեկ անգամ:Համայնքի ղեկավարը ստեղծել է աշխատակազմ հետևյալ դրույքաչափերով:

2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՐՇԱԼՈՒՅՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՀԱՍՏԻՔՆԵՐԻ ԹԻՎԸ

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 11
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը՝

Հ/Հ	Աշխատակիցների քանակ	Հաստիքացուցակ	Պաշտոնային դրույքաչափ
1	1	Համայնքի ղեկավար	270000
2	1	Համայնքի ղեկավարի տեղակալ	195000
3	1	Համայնքի ղեկավարի օգնական	145000
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ			
1	1	Աշխատակազմի քարտուղար	191000
2	1	Առաջատար մասնագետ	185000
3	1	Առաջին կարգի մասնագետ	167000
4	1	Երկրորդ կարգի մասնագետ	145000

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ			
1	1	Գործավար	100000
2	1	Վարորդ	140000
3	1	Էլեկտրիկ-փականագործ	83000
4	1	Տնտեսվար	112000
	11		

<<ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 16
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը՝

հ/հ	Աշխատակիցների քանակ	Հաստիքացուցակ	Պաշտոնային դրույքաչափ
1	1	Տնօրեն	111000
2	1	Տնօրենի տեղակալ	72752
3	3	Դաշնամուրի դասատու	72752
4	1	Քանոնի դասատու	72752
5	1	Դհոլ-դուդուկի դասատու	72752
6	1	Սոլֆեջիոյի դասատու	72752
7	1 .	Նկարչության խմբավար	72752
8	1	Պարի խմբավար	72752
9	1	Նկարահանող օպերատոր	72752
10	1	Մարզիչ	72752
11	1	Գլխավոր հաշվապահ	72752
12	1	Հավաքարար	72752
13	2	Պահակ	114500
	16		

<<ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 8
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը՝

հ/հ	Աշխատակիցների քանակ	Հաստիքացուցակ	Պաշտոնային դրույքաչափ
1	1	Տնօրեն	72752
2	1	Գրադարանի վարիչ	72752
3	1	Գրադարանավար	72752
4	1	Գլխավոր հաշվապահ	72752

5	2	Պահակ	114500
6	1	Եկեղեցու պահակ	72752
7	1	Հավաքարար	72752
	8		

<<ԱՐՇԱԼՈՒՅՍԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 10
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը՝

Հ/Հ	Աշխատակիցների քանակ	Հաստիքացուցակ	Պաշտոնային դրույքաչափ
1	1	Գործադիր տնօրեն	50000
2	1	Հաշվապահ	110000
3	1	Ընտանեկան բժիշկ	112804
4	3	Ընտանեկան բուժքույր	84307
5	1	Դպրոցական բուժքույր	72752
6	1	Համակարգչային օպերատոր	72752
7	1	Մայրապետ	72752
8	1	Վարորդ	72752
	10		

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Համայնքի սեփականություն համարվող գույքի ցանկը սահմանվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 14.03.1997թ. թիվ 51 որոշմամբ:

1. համայնքի վարչական շենք
2. մշակույթի տուն
3. սոցիալ—կենցաղային նշանակության այլ շենքեր և շինություններ
4. ներհամայնքային նշանակության ոռոգման համակարգ
5. ներհամայնքային նշանակության ջրամատակարարման համակարգ
6. ներհամայնքային փողոցներ և հրապարակ
7. ներհամայնքային նշանակության ճանապարհներ
8. գերեզմանատուն /բաց, փակ, Արցախում զոհված ազատամարտիկների/:

1960-ական թվականներին կառուցվել է խմելու ջրի ներհամայնքային համակարգը, որն ունի վերանորոգման կարիք, իսկ մաշվածության հետևանքով ջրի կորուստը հասնում է մոտ 40%-ի:

Առաջիկայում նախատեսվում է խմելու ջրի ջրագծի անցկացում համայնքի որոշ փողոցներում:Ոռոգման ցանցը ամբողջովին վերանորոգման կարիք ունի:

Համայնքի մշակույթի տունը (կառուցվել է 1961 թվականին) գտնվում է վթարային վիճակում և ունի կապիտալ վերանորոգման անհրաժեշտություն, սակայն համայնքի բյուջեի եկամուտներով, առանց պետության աջակցության հնարավոր չէ կատարել վերանորոգում:

2009 թվականի ընթացքում իրականացվել է համայնքի 13, 15, 17, 19 փողոցների գազաֆիկացման աշխատանքներ, որը 2010 թվականին հանձնվել է շահագործման:

Համայնքի կիսակառույց մանկապարտեզի կապիտալ շինարարական աշխատանքները իր ավարտին կհասցվի 2016-2017 թվականների ընթացքում: Համայնքում 2009 թվականին իրականացվել է բժշկական ամբուլատորիայի նոր շենքի կառուցումը, որը շահագործման է հանձնվել 2010 թվականին:Նախատեսվում է 2016 թվականին կատարել բժշկական ամբուլատորիայի շենքի շրջակա տարածքի կանաչապատման աշխատանքներ:

2008-2009 թվականների ընթացքում կատարվել է համայնքի <<Սուրբ Կարապետ>> սրբավայր տանող ճանապարհի լուսավորության համար հոսանքի նոր գծերի վերանորոգման աշխատանքներ, ինչպես նաև համայնքի կենտրոնական փողոցում և <<Սուրբ Մարիամ Աստվածածին>> եկեղեցու փողոցում ցերեկային լուսավորության ապահովում:

Արշալույսի գյուղական համայնքի միջնակարգ դպրոցում 2008-2009 թվականների ընթացքում կատարվել է ընթացիկ նորոգում , համայնքապետարանի միջոցներով:

Հայրենական Մեծ պատերազմի զոհերի հիշատակին նվիրված հուշարձանում կատարվել է ընթացիկ վերանորոգման աշխատանքներ և նախատեսված է կատարել աշխատանքներ հուշարձանի բարեկարգման համար:

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՈՉ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համայնքի տարածքում գործում են հետևյալ ձեռնարկությունները.

1. <<Մուշ 1>> ՍՊԸ
2. <<Արա և Այծեմնիկ>> ԲԲԸ
3. <<Ագրոմանպրոյեկտ>> ՍՊԸ
4. <<Կուարլինի>> ՍՊԸ
5. <<Արփենիկ գինու, կոնյակի գործարան>> ՍՊԸ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

2016 թվականին համայնքի ավագնու կողմից հաստատվել է համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը: Համայնքի բնակիչներին հատկացվել է ճարտարապետահատակագծային առաջադրանք, շինարարության թույլտվություն և ավարտական ակտ:

Համայնքում ծառերի մշակության, բնակավայրերի բարեկարգման համար ձեռք է բերվել դեկորատիվ ծառեր և թփեր, տկիներ և արմատակալներ, որոնց միջոցով կատարվել է կանաչապատման աշխատանքներ: 2016-2019թթ. նախատեսվում է կատարել ծառերի և ծաղիկների մշակության աշխատանքներ:

Համայնքում պարբերաբար կատարվում է սանիտարական մաքրման աշխատանքներ և վերջինիս հիման վրա իրականացվում բնակչությունից կենցաղային և շինարարական աղբի հավաքում և տեղափոխում: Համայնքում աղբահանությունը կատարվում է ամեն օր համայնքի բյուջեի և ազգաբնակչության կողմից վճարների միջոցով: Աղբահանությունը իրականացվում է գյուղապետարանի 3 աշխատողների կողմից Տ-40Ա տրակտորի միջոցով և աղբը կուտակվում է համայնքի ավագանու կողմից հաստատված համայնքից 5 կմ հեռավորության վրա գտնվող 1.89 հա աղբավայրում նախօրոք պատրաստված փոսերում, որն էլ հողով ծածկվում է հինգ օրը մեկ անգամ: Սանիտարական մաքրման սխեման 2016 թվականի հաստատվել է համայնքի ավագանու կողմից:

Համայնքի փողոցները լուսավորված են մասնակի և 2016 թվականի բյուջեով նախատեսված է կատարել որոշ փողոցների լուսավորության, ինչպես նաև անսարք լապտերների փոփոխման աշխատանքներ: Համայնքի մի քանի փողոցներում իրականացվել է ասֆալտապատման աշխատանքներ, սակայն կա անհրաժեշտություն կատարելու ներհամայնքային ճանապարհների և փողոցների վերանորոգման և ասֆալտապատման աշխատանքներ:

Համայնքային սեփականություն հանդիսացող հին գերեզմանոցում կատարվել է պարիսպապատման աշխատանքներ և նախատեսված է կազմակերպել գերեզմանատների գործունեությունն ու դրանց պահպանման աշխատանքները:

ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Համայնքն ունի 1747.2 հա հողեր, որից

- քաղաքացիների սեփականություն -882.28 հա
- իրավաբանական անձանց սեփականություն -65.52 հա
- համայնքային սեփականություն - 758.39 հա
- պետական սեփականություն -41,03 հա

Ըստ նպատակային նշանակության հողային ֆոնդը բաշխված է հետևյալ կերպ

- գյուղատնտեսական -1394.6 հա
- բնակավայրերի -258.06 հա
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության -43.97 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ
- հատուկ պահպանվող տարածքներ -12,78 հա
- ջրային -12,14 հա

Համայնքի 1747.2 հա հողային ֆոնդից 656.5 հա անջրդի հողեր են:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքի գյուղատնտեսության հիմնական ճյուղերն են՝
   - հողագործություն
   - անասնապահություն
   - այգեգործություն

Համայնքի գյուղացիական տնտեսությունները հիմնականում զբաղվում են ցորենի, գարու , առվույտի արտադրությամբ, խաղողի և պտղատու ծառերի (խնձոր, ծիրան, տանձ) մշակմամբ: Համայնքի բնակիչները զբաղվում են նաև ջերմոցային մշակաբույսերի /լոլիկ, վարունգ, պղպեղ, կանաչի, ելակ և այլն/ և ծաղիկների /վարդ, մեխակ, ալստրոմերի, թրաշուշան և այլն/ աճեցմամբ:
Գյուղատնտեսությամբ զբաղվում են մոտ 1615 բնակիչ:
Համայնքն ունի 689 խոշոր եղջերավոր անասուն և 120 գլուխ մանր եղջերավոր անասուններ:

2. Համայնքի գյուղարտադրանքի հիմնական տեսակներն են.

- ցորեն
- գարի
- կարտոֆիլ
- կաղամբ
- սմբուկ
- լոլիկ
- վարունգ
- բանջարաբոստանային մշակաբույսեր
- կաթնամթերք
- միս
- բուրդ
- ձու

Համայնքի դաշտամիջյան անանցանելի ճանապարհները վերջին 8 տարիներ ընթացքում վերանորոգվել և կատարվել է հողալցման աշխատանքներ:
2016-2019թթ. նախատեսվում է կատարել միջհամայնքային փողոցների և դաշտամիջյան ճանապարհների շիբինապատման և հողալցման աշխատանքներ:

ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Համայնքում պարբերաբար կատարվում է աղբահանություն:
Բնակչությանը մեծ վնաս է հասցնում <<ՀԱԷԿ>> ՓԲԸ-ի արտանետած թունավոր գազերը:
Համայնքի ոռոգելի գյուղատնտեսական նշանակության հողատարածքները կազմում է 1090.7 հա, սակայն համայնքում առկա են նաև 656.5 հա գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող հողատարածքներ:

ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքում առկա է 35 ներհամայնքային փողոց, որոնց միջին երկարությունը կազմում է մոտ 2 կմ: Փողոցների վերանվանումը կատարվել է 2011 թվականի ավագանու կողմից և հաստատվորվել է շենքերն ու շինությունները: Համայնքի ճանապարհները գտնվում են բարվոք վիճակում, սակայն կան անանցանելի փողոցներ և 2016-2019 թվականներին նախատեսվում է կատարել ասֆալտապատման և շիբինապատման աշխատանքներ: Համայնքով անցնում է Երևան-Արմավիր մայրուղին: Համայնքով մոտ 40 րոպեն մեկ անգամ անցնում է Էջմիածին-Արշալույս-Արմավիր հասարակական տրանսպորտը, առկա է նաև մարդատար տաքսիներ:

Համայնքում գործում է գյուղատնտեսական շուկա, որը գտնվում է համայնքի տարածքում, կենտրոնից մոտ 1 կմ հեռավորության վրա:

ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքի տարածքում գործում են

- մանրածախ առևտրի խանութներ 9
- հասարակական սննդի օբյեկտ 2
- գազի լիցքավորման կետ 1
- բենզինի լցակայան 1

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Համայնքի դպրոցը հիմնվել է 1979 թվականի սեպտեմբերի 28-ին Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Դ-ի կոնդակով որպես ծխական դպրոց: 1965 թվականի դպրոցը դարձել է միջնակարգ, իսկ ներկայումս անվանակոչվել է <<Արշալույսի Սամվել Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպություն: Դպրոցում սովորում է 492 աշակերտ և ունի 57 աշխատող: Դպրոցի շենքը գտնվում է բարվոք վիճակում, ունի նոր կառուցած դահլիճ և 2015 թվականին ասֆալտապատած բակ:

Դպրոցում գործում է նաև նախադպրոցական կրթություն 3 դաստիարակով և 90 երեխաներով: Սենյակները կապիտալ վերանորոգված է և կահավորված երեխաների համար անհրաժեշտ կահույքով:

ՄՇԱԿՈՒՅԹ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Համայնքում գործում է <<ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը պարի, նկարչության, թաեկվանդո մարզաձևի խմբակներով 13 աշխատողով և 125 աշակերտով:

Համայնքում գործում է <<Կրթություն և մշակույթ>> միացյալ տնօրինությունը 7 աշխատողով և մեծ գրադարանով, որտեղ առկա է 9906 կտոր գիրք: Գրադարանն ունի 801 կարդացող:

Համայնքն ունի 90 ուսանող, ովքեր երթևեկում են Երևան համայնքապետարանի կողմից հատկացված անվճար ուսանողական ավտոբուսով:

Համայնքում ընթացքի մեջ է գտնվում մանկապարտեզի կիսակառույց շենքի վերանորոգումը, որը իրականացվում է Հայաստանի Տարածքային զարգացման հիմնադրամի կողմից 199582151 ՀՀ դրամ նախահաշվային արժեքով, որից 13970750 ՀՀ դրամը հատկացվել է համայնքի միջոցներից: Շենքի կառուցման աշխատանքները իր ավարտին հասցնելու անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ համայնքի նախադպրոցական տարիքի երեխաների համար ապահովել համապատասխան պայմաններ մատաղ սերնդի մշակութային, հոգևոր զարգացման մակարդակի զարգացման համար

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ, ՍՊՈՐՏ

Համայնքի բժշկական ամբուլատորիայի շենքը կառուցվել է 2009 թվականի և հանձնվել շահագործման 2010 թվականին: Բժշկական ամբուլատորիայում աշխատում են 9 աշխատող և 1 բժիշկ, ովքեր սպասարկում են համայնքի 4322 մեծահասակ և փոքրահասակ բնակչությանը: Ամբուլատորիան ապահովված է բժշկական սպասարկման համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով: 2011 թվականի հունիսի 9-ին <<Փյունիկ>> բարեգործական հիմնադրամի կողմից անհատույց բարեգործական նպատակով ամբուլատորիային հանձնեց MERSEDES-BENZ 412 CDI մակնիշի տրանսպորտային միջոցը /շտապ օգնության մեքենան/, որը այդիսկ օրվանից մինչ օրս շահագործվում է համայնքապետարանի միջոցներով:

ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏԻ

Համայնքն ունի մեկ հանգստի գոտի՝ Ակնա լճին հարակից տարածքները, որտեղ տարածքի սահմանների ճշտման, բարեկարգման և արդիականացման աշխատանքների անհրաժեշտություն կա:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Համայնքում սոցիալական ծառայությունից օգտվում են ընտանեկան նպաստ, հրատապ օգնություն և սոցիալական նպաստ ստացող 88 ընտանիքներ: Սակայն համայնքում բարձր է գործազրկության մակարդակը: Համայնքապետարանի մշտական ուշադրության ներքո են գտնվում հաշմանդամները, կերակրողին կորցրած ընտանիքները, սոցիալապես անապահով այլ խավերը, ովքեր ստանում են սոցիալական օգնություն համայնքի բյուջեից:

ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

Համայնքի ավագանու կողմից հաստատվել է բնակիչների մասնակցության կարգը, որը գործում է ակտիվ: Իսկ համայնքի ղեկավարի և ավագանու որոշումները տեղադրվում են համայնքապետարանի կայքէջում, որի միջոցով բնակիչը ձեռք է բերում իրազեկման հնարավորություն, ինչպես նաև դրանք փակցվում են համայնքի տեսանելի վայրերում: Ավագանու դռնբաց նիստերին մասնակցում են նաև համայնքի բնակիչները, ովքեր ակտիվ մասնակցություն են ունենում համայնքի շահերին վերաբերվող հարցերին:

Յուրաքանչյուր 6 ամիսը մեկ անգամ համայնքի ղեկավարը հանրության է ներկայացնում իր և ավագանու կողմից կատարած աշխատանքները:

ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Չնայած համայնքում միջոցներով ձեռք բերված, տեղադրված և կանոնավոր շահագործվող երկու հակակարկտային կայանների՝ անբարենպաստ եղանակի հետևանքով կարկտահարության և ցրտահարության հետ կապված վտանգները հանդիսանում է համայնքի խոցելի մաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքը մշտական կապի մեջ է մարզկենտրոնի և մայրաքաղաքի հետ: Համայնքի վարչական տարածքով է անցնում Երևան-Արմավիր մայրուղին:
Համայնքի բնակչությունը օգտվում է 24 ժամյա ջրամատակարարումից:
Համայնքի մոտ 80%-90%-ով գազաֆիկացված է: Համայնքում հեռարձակվում է են բոլոր մետրային և դեցիմետրային հեռուստաալիքները:

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- Ներհամայնքային փողոցների անմխիթար վիճակը
- Սոցիալապես անապահով ընտանիքների մոտ 20%-30%-ի առկայությունը
- Խմելու ջրի և ոռոգման համակարգերի վերանորոգման անհրաժեշտությունը
- Գործազրկության բարձր մակարդակը
- Կոմունալ տնտեսության (ջրամատակարարում, ոռոգման ցանց, ջրահեռացում) և ճանապարհային տնտեսության անմխիթար վիճակը գյուղապետարանի և նրա ենթակա հիմնարկների նյութատեխնիկական բազայի ոչ լիարժեք ապահովումը

ՀԱՄԱՅՆՔԻ ՎՏԱՆԳ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Խմելու ջրի և ոռոգման ցանցի ներհամայնքային համակարգի մաշվածությունը <<ՀԱԷԿ>> ՓԲԸ –ի արտանետած թունավոր գազերի առկայությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Համայնքի զարգացման երկարամյա ծրագրի ռազմավարությունն է անցկացնելու բարեփոխումներ ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, համայնքը դարձնել մաքուր, բարեկարգ և բարեկեցիկ բնակավայր:

Համայնքի հիմնական նպատակները

- խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգում
- ներհամայնքային ճանապարհների և փողոցների վերանորոգում և ասֆալտապատում
- մշակույթի տան վերանորոգում
- ոռոգման ներհամայնքային համակարգի վերանորոգում

ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ, ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ ԵՎ ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

Ծ Ր Ա Գ Ի Ր 1
ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

Արշալույս համայնքի ջրամատակարարման համակարգը կառուցվել է 1960-ական թվականներին և մինչև օրս չի վերանորոգվել:Վերջին տարիների տնտեսական անկման և ֆինանսական սղության պատճառով շարքից դուրս են եկել մոտ 40 տարվա վաղեմություն ունեցող մաշված ջրագծերը:Պետք է նաև հաշվի առնել այն հանգամանքը, որ վերանորոգման ենթակա ջրագծի մի մասն անցնում է աղուտ հողերով, որտեղ խողովակները ենթարկվում են կոռոզիայի և վնաս հասցնում խողովակաշարերին:

Սույն ծրագրով առաջարկվում է հիմնական վերանորոգան ենթարկել և կառուցել համայնքի ջրամատակարարման համակարգը:

ԾՐԱԳԻՐ 2

ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԵՎ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՈՒՄ

Ծրագրի անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ համայնքի փողոցների մի մասը գտնվում է ոչ բարվոք վիճակում և բնակչության համար դժվար է տեղափոխել գյուղատնտեսական մթերքը մոտակա շուկա:

ԾՐԱԳԻՐ 3
ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՅՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Համայնքի մշակույթի տունը, որտեղ գտնվում է նաև գրադարանը, կառուցվել է 1961 թվականին:Այն գտնվում է վթարային վիճակում, ամբողջ շենքը ենթակա է կապիտալ նորոգման:

Ծրագրի անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ բնակչությունը չունի աշխատանքից ազատ ժամերին հանգստանալու և ժամանց կազմակերպելու վայր:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

- Աշխուժացնել մշակութային կյանքը համայնքում:
- Մշակույթի տան դահլիճը տրամադրել հարսանյաց արարողությունների, ավագանու նիստերի, ժողովների, կոնֆերանսների, համագումարների անցկացման համար:
- Տոնական օրերին կազմակերպել մասսայական միջոցառումներ և երեկույթներ:
- Տրամադրել խաղասենյակներ շախմատի, նարդու և այլ խաղերի համար:
- Ապահովել անհրաժեշտ պայմաններ բնակիչների կրթական և հոգևոր զարգացման համար:

ԾՐԱԳԻՐ 4

ՈՌՈԳՄԱՆ ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

Ծրագրի անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ ոռոգման ջուրը հասանելի լինի համայնքի ողջ բնակչության համար, որն էլ կնպաստի հողագործությամբ զբաղվողներին աջակցելուն և գյուղատնտեսության զարգացմանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Արշալույս, 0231-6-09-34

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 սեպտեմբերի 2016 թվականի N 44

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 9-Ի ԹԻՎ 17-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնքի ավագանու 2016 թվականի փետրվարի 9-ի <<Համայնքապետարանի աշխատակազմի և բյուջետային հիմնարկների 2016 թվականի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և համայնքի ավագանու 2015 թվականի նոյեմբերի 13-ի թիվ N60 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 17-Ն որոշմամբ հաստատված հավելված 2-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԵՓՐԵՄՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
2. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԱՄ
3. ԿՆՅԱԶՅԱՆ ԱՐԱՅԻԿ
4. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԹՈՒՐ
5. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՌՈՒԲԵՆ
6. ՇԱՀԲԱԶՅԱՆ ԱՇՈՏ
7. ՍԵՐՈԲՅԱՆ ԱՍԱՏՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Զ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2016 թվականի սեպտեմբերի 26
գ. Արշալույս

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2016 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 44 ՈՐՈՇՄԱՆ

<<ՀԱՎԵԼՎԱԾ 2
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 9-Ի ԹԻՎ 17 ՈՐՈՇՄԱՆ

<<ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 16
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը՝

Հ/Հ	Աշխատակիցների քանակ	Հաստիքացուցակ	Պաշտոնային դրույքաչափ
1	1	Տնօրեն	111000
2	1	Նվագակցող	72752
3	3	Դաշնամուրի դասատու	72752
4	1	Քանոնի դասատու	72752
5	1	Դհոլ-դուդուկի դասատու	72752
6	1	Սոլֆեջիոյի դասատու	72752
7	1	Նկարչության խմբավար	72752
8	1	Պարի խմբավար	72752
9	1	Նկարահանող օպերատոր	72752
10	1	Մարզիչ	72752
11	1	Գլխավոր հաշվապահ	72752
12	1	Հավաքարար	72752
13	2	Պահակ	114500
	16		

>>: